

Հավելված 1  
Հայաստանի Հանրապետության  
Արմավիրի մարզի Վարդանաշեն  
համայնքի ավագանու  
2017 թվականի հունվարի 13 -ի  
N 02 -Ն որոշման

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**

**ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶ**

**ՎԱՐԴԱՆԱՇԵՆ**

**ՀԱՄԱՅՆՔԻ**

**Հ Ն Գ Ա Մ Յ Ա**

**Զ Ա Ր Գ Ա Ց Մ Ա Ն Ծ Ր Ա Գ Ի Ր**

Մշակվել և ներկայացվել է՝ համայնքի ղեկավար՝ ԱՐԹՈՒՐ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ կողմից  
Հաստատվել է՝ համայնքի ավագանու 2017թ հունվարի 13 –ի թիվ 02 - Ն որոշմամբ

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ .....  
    ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ.....
2. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ.....
3. ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
    ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ .....
4. ՀԶՉԾ-Ի ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ.....
5. ՀԶՉԾ-Ի ՍՈՆԻԹՈՐԻՆԳ.....
6. ԵԶՐԱՓՈՒԿՈՒՄ.....

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Համայնքի հնգամյա զարգացման ծրագիրը (այսուհետ՝ ՀՀԶԾ) համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի վերլուծության և առկա հիմնախնդիրների բացահայտման, ֆինանսական, տնտեսական, բնական և մարդկային ռեսուրսների գնահատման արդյունքում նպատակային զարգացման տեսանկյունից ձեռնարկվելիք քայլերի ամբողջությունն արտահայտող փաստաթուղթ է, որը ենթադրում է համայնքի հիմնախնդիրների արդյունավետ լուծում և տեսլականի իրականացում:

ՀՀԶԾ-ն իր մեջ ներառում է համայնքի կարևորագույն և առաջնային խնդիրները, դրանց լուծումը և լուծման համար նախատեսվող քայլերը: ՀՀԶԾ-ի շրջանակներում իրականացված յուրաքանչյուր միջոցառում պետք է գնահատվի, որպեսզի բացահայտվեն թիրախային արդյունքներից հնարավոր շեղումների պատճառները, մշակվեն միջոցառումների իրականացման ավելի արդյունավետ այլընտրանքային տարբերակներ:

ՀՀԶԾ-ն մշակվելու է՝ հիմք ընդունելով Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքը, օրենքով սահմանված՝ տեղական ինքնակառավարման մարմինների իրավասություններն ու լիազորությունները, նրանց գործունեության բնագավառները (ուրրտները), ՀՀԶԾ-ի մշակման և կառավարման վերաբերյալ համապատասխան հոդվածների դրույթները, ինչպես նաև Արմավիրի մարզպետի կողմից ներկայացված համայնքի հնգամյա զարգացման ծրագրի մշակման մեթոդական ուղեցույցը:

Համայնքի զարգացման հնգամյա ծրագիրը մշակվում է համայնքի ղեկավարի և նրա աշխատակազմի կողմից, հաշվի են առնվում համայնքում առկա գերակա խնդիրները, համայնքի զարգացմանը և համայնքի բնակիչների գոհունակությունը խթանող բոլոր ռեսուրսները, որից հետո միայն քննարկվում և հաստատվում է համայնքի ավագանու կողմից և դրվում է գործողության մեջ: Հնգամյա զարգացման ծրագրի մշակումը լուրջ աշխատանք է, որի կազմակերպմանն անհրաժեշտ է մոտենալ լուրջ պատասխանատվությամբ:

# 1. ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔԸ

Ողջունում եմ Ձեզ՝ Արմավիրի մարզի Վարդանաշեն համայնքի բնակիչներին, համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցներին, համայնքային ենթակայության բյուջետային աշխատակիցներին և ավագանուն: Իմ շնորհակալությունն եմ հայտնում Ձեզ համայնքի հնգամյա զարգացման ծրագրի մշակման և հետագայում իրականացման գործում հետաքրքրություն ցուցաբերելու համար: Համայնքում առկա կարևորագույն խնդիրների լուծման գործում մենք մեր ներդրումը պետք է ունենանք թե խելամիտ առաջարկներով և թե արդյունավետ ծրագիր մշակելով:

Վարդանաշեն համայնքի 2017-2021 թթ. զարգացման հնգամյա ծրագիրը մշակելիս հաշվի է առնվել 2015 թվականի դեկտեմբերի 6-ին փոփոխված ՀՀ Սահմանադրության 181-րդ հոդվածը, ըստ որի ՏԻՄ-երը՝ համայնքի ավագանին և համայնքի ղեկավարը, ընտրվում են հինգ տարի ժամկետով և 210-րդ հոդվածի 4-րդ մասը՝ Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքը, որը համապատասխանեցվել է Սահմանադրությանը և ուժի մեջ է արդեն 2017 թվականի հունվարի 1-ից: Հաշվի առնելով այդ պահանջները՝ մշակվել է համայնքի զարգացման ոչ թե քառամյա, այլ հնգամյա ծրագիր:

Ներկայացվող ՀԶԾ-ն առաջիկա հինգ տարիների համար հանդիսանալու է Վարդանաշեն համայնքի զարգացման հիմնական փաստաթղթերից մեկը: ՀԶԾ-ի բովանդակությունը պայմանավորված է համայնքի ռեսուրսային (մարդկային, գույքային, ֆինանսատնտեսական, տեխնիկական և այլ) հնարավորություններով, համայնքային ծրագրերի իրականացման և ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների և ենթակառուցվածքների առկայությամբ: ՀԶԾ-ում հնարավորինս հաշվի են առնվել համայնքի հանրային ծառայությունների մատչելիության և հասանելիության, նոր ծառայությունների մատուցման և դրանցով պայմանավորված լրացուցիչ ծախսեր առաջանալու խնդիրները: ՀԶԾ-ն մշակելիս որպես կողմնորոշիչ են դիտարկվել համայնքի զարգացնելու անհրաժեշտությունը, համայնքի տարածքում տնտեսական գործունեության խրախուսման առկա հնարավորությունները, տնտեսության տարբեր ճյուղերի զարգացման (հատկապես՝ արտադրական կազմակերպությունների, փոքր և միջին բիզնեսի և այլնի) հնարավորությունը, որը իր հերթին նոր աշխատատեղեր կստեղծի համայնքում, արդյունավետ կառավարման իրականացումը: Վերհանված հիմնախնդիրների հիման վրա, ելնելով Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքի պահանջներից, համայնքի ղեկավարը՝ համայնքապետարանի աշխատակազմի և համայնքի ավագանու հետ միասին մշակել է համայնքի 2017-2021 թթ. ՀԶԾ-ն, որը քննարկվել և հաստատվել է համայնքի ավագանու կողմից և դրվել է գործողության մեջ:

Համայնքի 2017-2021 թթ. ՀԶԾ-ում ներառված են Վարդանաշեն համայնքի տարածական զարգացումը սահմանող՝ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման կամ դրանց փոփոխման (լրացման) մասին դրույթներ, շրջակա միջավայրի պահպանմանն ուղղված նախատեսվող միջոցառումներ, համայնքում գործարար միջավայրի բարելավմանն ուղղված միջոցառումներ, աղետների ռիսկերի կառավարման և քաղաքացիական պաշտպանության հիմնական մոտեցումներ, համայնքի կոմունալ ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված միջոցառումներ: ՀԶԾ-ն ներառում է նաև համայնքի ղեկավարի և ավագանու անդամների նախընտրական ծրագրերի բաղադրիչները: Այն Վարդանաշեն համայնքի ներդաշնակ և համաչափ զարգացման, համայնքի բնակիչների բարեկեցության ապահովման համար առաջիկա հինգ տարիներին ընդունված ծրագիր է, որը հանդիսանալու է համայնքի ամենօրյա փաստաթուղթը:

Վարդանաշեն համայնքի աշխատակազմը, փաստաթուղթը մշակելիս, հատուկ ուշադրություն է դարձրել և ձգտել, որպեսզի այն հնարավորինս համահունչ լինի գործողության մեջ դրված ՀՀ ռազմավարական, մարզային և տարածաշրջանային զարգացման ծրագրերին՝ ակնկալելով ՀՀ պետական կառավարման մարմինների, քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի կազմակերպությունների հետ լիակատար փոխըմբռնում ՀԶԾ-ում ներկայացված խնդիրների առնչությամբ և արդյունավետ համագործակցություն դրանց լուծման գործում:

*Համայնքի ղեկավար՝ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆ*

## 2. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

### 2.1 ՀԱՄԱՅՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Վարդանաշեն համայնքը (մինչև 1946թվականը կոչվել է Չիբուխչի) գտնվում է միջինարաքայան հարթավայրում, Երևանից ունի 35կմ հեռավորություն, մարզկենտրոնից՝ 22 կմ, բարձրությունը ծովի մակերևույթից 850 մ է: Համայնք ունի ուղիղ տրանսպորտային կապ Երևան և Վաղարշապատ քաղաքների հետ: Հարավ-արևմուտքից սահմանակից է Արագածի համայնքին, իսկ հյուսիս-արևելքից Երասխահուն համայնքին: Համայնքի կլիման աչքի է ընկնում մեղմ, իսկ վերջին տարիներին նաև ցրտաշունչ ձմեռներով, ուշ գարնանային և վաղ աշնանային ցրտահարություններով, որից տուժում է գյուղատնտեսությունը:

2009թվականից համայնքում գործում է աղբահանության կենտրոնացված համակարգ:

Կենցաղային աղբի կուտակման համար առանձնացվել և հատկացվել է տարածք:

Շաբաթական մեկանգամյա աղբահավաքումը բնակիչների գոհունակության առիթն է, որը խթանում է համայնքի մաքրությանը և բնապահպանությանը:

**2.2 ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ,  
ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

**Աղյուսակ 1. Համայնքի մշտական բնակչության ու տնային տնտեսությունների  
ցուցանիշները ներկայացված են 01.01.2017 թ. դրությամբ**

Հ/Հ	Ցուցանիշները	Մարդ
1.	Բնակչության թվաքանակը	<b>1360</b>
2.	Տնային տնտեսությունների թվաքանակը	<b>526</b>
2.1	այդ թվում՝ ժամանակավոր կացարաններում /վագոն, տնակ/ բնակվող	<b>12</b>
2.2	կիսակառույց տներում բնակվող	<b>4</b>
3.	Ընտանեկան նպաստ ստացող ընտանիքների քանակը	<b>23</b>

**Աղյուսակ 2. Համայնքի առկա բնակչության տարիքային և սոցիալական կազմի  
ցուցանիշները (01.01.2017 թ. դրությամբ)**

Հ/Հ	Ցուցանիշները	Ընդամենը	Կանայք	Տղամարդիկ
1.	Համայնքի բնակչության թիվը, այդ թվում՝	<b>1273</b>	<b>628</b>	<b>645</b>
	0-15 տարեկան	<b>333</b>	<b>199</b>	<b>134</b>
	16 տարեկան	<b>13</b>	<b>4</b>	<b>9</b>
	17 տարեկան	<b>13</b>	<b>6</b>	<b>7</b>
	18 տարեկան	<b>24</b>	<b>10</b>	<b>14</b>
	16-62տարեկան	<b>828</b>	<b>378</b>	<b>450</b>
	63 և բարձր	<b>112</b>	<b>47</b>	<b>65</b>
2.	Կենսաթոշակառուներ (ներառյալ հաշմանդամներ) այդ թվում՝	<b>97</b>	<b>42</b>	<b>55</b>
3.	Միակողմանի ծնողազուրկ երեխաներ	<b>13</b>	<b>6</b>	<b>7</b>
4.	Երկկողմանի ծնողազուրկ երեխաներ	<b>1</b>	<b>0</b>	<b>1</b>
5.	Հաշմանդամ երեխաներ	<b>3</b>	<b>1</b>	<b>2</b>
6.	Խնամակալության հանձնված երեխաներ	<b>1</b>	<b>0</b>	<b>1</b>
7.	Հայրենական մեծ պատերազմի մասնակիցներ	<b>1</b>	<b>0</b>	<b>1</b>
8.	Արցախյան պատերազմի մասնակիցներ	<b>15</b>		<b>15</b>
9.	Հաշմանդամներ	<b>15</b>	<b>6</b>	<b>9</b>
10.	Զբաղվածներ /հողագործությամբ/	<b>670</b>		
11.	Գործազուրկներ	<b>264</b>		
12.	Ընտանեկան նպաստների պետական համակարգում գրանցված ընտանիքների թիվը	<b>23</b>		

Համայնքի բնակչության 51% կազմում են տղամարդիկ և 49% կանայք:

Գործազուրկների մեծամասնություն կազմում են կանայք: Տղամարդկանց աշխատունակ մասի շատ չնչին տոկոսն է մեկնում արտագնա աշխատանքի:

Համայնքի բնակչության հիմնական մասը հայեր են, միայն ընդհանուր թվաքանակի 8% է այլազգի:

### **Համայնքի տարածքը**

Համայնքի վարչական տարածքը 965.40 հա է, որից

- Բնակավայրեր` - 112.51հա
- Գյուղատնտեսական` - 780.97հա
- Արդյունաբերական և ընդերքօգտագործման` - 9.21հա
- Հատուկ պահպանվող տարածքներ` - 6.81հա
- Հատուկ նշանակության` - 8.56հա
- Ջրային` - 44.74հա
- Էներգետիկայի, տրանսպորտի, կապի` - 2.60հա

Համայնքում կա 190 բնակելի առանձնատուն: 4 կիսակառույց առանձնատներում ապրող ընտանիքներ երկար տարիներ, սուղ ֆինանսական պայմանների պատճառով չեն կարողանում ավարտել շինարարությունը, իսկ 25 ընտանիքներ ունեն բնակարանի կարիք և ցավոք սրտի այդ թիվը աճում է:

### **Տեղական ինքնակառավարման մարմիններ**

Համայնքը ղեկավարում է 2013թ վերընտրված համայնքապետը, ավագանին բաղկացած է 5 անդամից, ովքեր ընտրվել են 2016թ սեպտեմբերի 18-ին: Համայնքապետարանի աշխատակազմի և նրա ենթակայության կազմակերպությունների աշխատակիցների քանակը 11 է`

համայնքի ղեկավար

ղեկավարի տեղակալ

աշխատակազմի քարտուղար

աշխատակազմի առաջատար մասնագետներ`-3

համայնքապետարանի ենթակայության այլ կառուցվածքների աշխատակիցներ`-5

Համայնքապետարանի շենքը գտնվում է վատթար վիճակում, որից 1 սենյակ հատկացված է բուժամբուլատորիային և 1 սենյակ փոստին:

### **Համայնքի ջրամատակարարումը**

Համայնքի մշակվող վարելահողերի մոտ 80% ոռոգվում է Սև Ջուր Ախթամար «ԶՕԸ» մատակարարած ջրով, սակայն գյուղատնտեսության թեժ սեզոնին ջուրը ոչ միշտ է բավարարում բնակիչներին, իսկ պատճառը բարձր հզորությամբ պոմպերի սակավ քանակն է և ջրագծերի, առուների վատթար վիճակում լինելը: Հողերի մնացած մասը ոռոգվում է բնակիչների միջոցներով, իրենց իսկ պոմպերով:

Կարևորագույն հարց է մնում համայնքի խմելու ջուրը: Խմելաջրի ջրագծերը կառուցվել են 1960-ական թվականներին և մինչ այսօր չեն վերանորոգվել: Վերջին տարիներին խմելաջրի մատակարարումը որոշ չափով կարգավորվել է համայնքապետարանի միջոցներով, սակայն օրական 2ժամ մատակարարումը չի բավականացնում բնակիչներին: Բնակիչները հազիվ կարողանում են խմելու ջուր հավաքել 24ժամվա համար, իսկ մնացած կենցաղային հարցերի համար օգտվում են նախկին ինքնահոս աղբյուրներից, որոնք բնակլիմայական պայմանների պատճառով 19-ից դարձել են 3-ը և այժմ համայնքապետարանի շնորհիվ ջուր են տալիս պոպմերի տեղակայմամբ: Ջրային կառույցների և մատակարարման ցանցի քայքայված և մաշված վիճակի պատճառով

բնակիչները գրկված են ապրելու տարրական պայմաններից: Վախ կա նույնիսկ, որ առաջիկա մի քանի տարիների ընթացքում ջրագծերի կոռոզիայի պատճառով կդադարեցվի նույնիսկ այդ շժամ մատակարարումը:

### **Կրթություն, մշակույթ, սպորտ**

Համայնքն ունի երկհարկանի դպրոց, որի վերանորոգումը կհսատ է: Դպրոցը չունի սպորտ դահլիճ, դասարանները կոսմետիկ հարդարման և գույքի կարիք ունեն: Աշակերտների թվաքանակը այս տարվա դրությամբ 131 է: Տարեց տարի համայնքը բարձրագույն ընդունվողների թվաքանակի աճ է գրանցում:

Համայնքում երկար տարիներ է ինչ գլխավոր խնդիր է մնում մշակույթի տան բացակայությունը: 1969թվականին կառուցված մշակույթի տունը արդեն 4 տարի է չի օգտագործվում՝ շենքային վատ և վտանգավոր պայմանների պատճառով:

Մշակույթի տունը համայնքի երիտասարդության ինչպես նաև ամբողջ բնակչության զարգացման մեծ խթան կարող է հանդիսանալ:

Համայնքն ունի նաև ֆուտբոլի խաղադաշտի և մարզադպրոցի կարիք, քանի որ երեխաների և պատանիների մոտ 50-ը զբաղվում է տարբեր տեսակի սպորտաձևերով և դրա համար ստիպված հասնում մարզկենտրոն կամ Էջմիածին քաղաք:

### **Առողջապահություն**

Համայնքի բնակիչներին առաջին օգնության են հասնում համայնքում գործող բուժամբուլատորիայի աշխատակիցները, ովքեր նույնիսկ շենքային վատ պայմանների դեպքում աշխատում են բարեխղճորեն: Համայնքապետարանի շենքից հատկացված մի փոքր սենյակ, որը ծառայում է որպես բժշկական ամբուլատորիա, համալրված է առաջին անհրաժեշտ տեխնիկայով ու սարքավորումներով: Հաշվի առնելով առողջության անփոխարինելիությունը և բուժկետի կարևորությունը համայնքում, համայնքապետարանը իր առջև խնդիր է դնում առաջ քաշել այդ հարցը առաջիկա հինգ տարիների ընթացքում:

### **Առևտուր և սպասարկում**

Համայնքում առևտրի, հասարակական սննդի և սպասարկման ոլորտի օբյեկտների թիվը 7 է, որից

- առևտրի փոքր, միջին և խոշոր օբյեկտներ՝ 4
- բենզինի լցակայան՝ 1
- գազի լցակայան՝ 1
- սննդի արտադրամաս՝ 1

Համայնքում գործող սննդի արտադրամասը պատկանում է անհատ ձեռներեցի, որտեղ պատրաստվում է չիր՝ տարբեր տեսակի մրգերից: Արտադրամասը բարեկարգման և ժամանակակից սարքավորումների համալրման կարիք ունի, որը աշխատատեղերի շատացման և գյուղմթերքի իրացման խթան կհանդիսանա:



## ***2.3 Համայնքում իրականացվող ծրագրեր***

Համայնքապետարանի կողմից համայնքում իրականացվում են ծրագրեր՝

- Արտաքին լուսավորության ցանցի անցկացում (արդեն համայնքի գլխավոր փողոցը և գերեզմանատունը լուսավորվում են):
- Ներհամայնքային փողոցների նորոգում:
- Անապահով ընտանիքներին աջակցություն ամեն տարի, որը կատարվում է թե ֆինասական ձևով, պարենային մթերքով, գարնանը նաև սերմացուներով և պարարտանյութերով:
- Համայնքապետարանը կաջակցի համայնքում գործող անհատ ձեռներեց Ա.Գ.-ին պատկանող չորանոցին՝ զարգացնել և ավելացնել հումքի ընդունման ծավալները:

## **Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրություն և ֆինանսական կանխատեսումները**

Քանի որ համայնքի բյուջեի ֆոնդային մասում մուտքեր քիչ են կանխատեսվում, ապա պլանավորվող հինգ տարիների կապիտալ ծախսերը մեծամասամբ կիրականացվեն համայնքի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումների և դոնոր կազմակերպությունների հաշվին:

Վարչական բյուջեի եկամուտները ձևավորվում են սահմանափակ թվով եկամտատեսակների՝ հարկերի, տեղական տուրքերի և գույքի վարձակալությունից եկամուտների հաշվին: Համայնքի բյուջեի կանխատեսվող եկամուտների մեծ մասը ձևավորվում է պետական բյուջեից համայնքներին տրամադրվող ֆինանսական համահարթեցման դոտացիաների հաշվին:

	ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ	ՏԱՐԵԿԱՆ	ՀԱՇՎԱՐԿ
		ՊԼԱՆ	ՓԱՍՏ
1.	Հողի հարկ	6300.0	3651.5
2.	Գույքահարկ(շենքերի և շինությունների)	150.0	150.54
3.	Գույքահարկ(փոխադրամիջոցների)	850.0	850.0
4.	Տեղական տուրքեր	174.0	174.0
5.	Հողերի վարձավճարներ	850.0	250.0
6.	ՀՀ պետական բյուջեից դոտացիա	19756.4	19756.4
7.	ՀՀ պետական բյուջեից տրամադրվող այլ դոտացիա	-	1000.0

### ՀԱՄԱՅՆՔԻ 2017-2021թթ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐ

Հ/հ	Մուտքերի անվանումը	2015թ.	2016թ.	2017թ.	2018թ.	2019թ.	2020թ.	2021թ.
		փաստ.	փաստաց	կանխ.	կանխ.	կանխ.	կանխ.	կանխ.
	<b>ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՄՈՒՏՔԵՐ՝ ԸՆԴԱՄԵՆԸ</b>							
1	<b>ՀԱՐԿԵՐ ԵՎ ՏՈՒՐՔԵՐ</b>							
1.1	Հողի հարկ	4222.0	6300.0	6300.0	6300.0	6300.0	6300.0	6300.0
1.2	Գույքահարկ շենք շինությունների և փոխադրամիջոցների համար	1000.0	1000.0	1000.0	1000.0	1000.0	1000.0	1000.0
1.3	Տեղական տուրքեր	174.0	174.0	174.0	174.0	174.0	174.0	174.0
1.4	<b>Գույքի վարձակալությունից եկամուտներ</b> Համայնքի սեփականություն համարվող հողերի վարձակալության վարձավճարներ	850.0	850.0	850.0	850.0	850.0	850.0	850.0
2	<b>Ընթացիկ ներքին պաշտոնական</b>							

	<b>դրամաշնորհներ/2.1/</b>							
2.1	Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ	19196.9	19756.4	19756.4	19756.4	19756.4	19756.4	19756.4

**ԶԱՐԳԱՅՄԱՆ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐ ԵՎ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

Համայնքի զարգացման համար խոչընդոտներն ու դժվարությունները բազմաթիվ են: Դրանց մի մասը կապված է բնակիչների վատ սոցիալական վիճակի, իսկ մյուս մասը համայնքի անբարեկարգ վիճակի, անկանոն ջրամատակարարման և անհրաժեշտ եկամուտների բացակայության հետ: Համայնքում վարելահողերի մեծ մասը մշակվում է, սակայն վատ ջրամատակարարման պատճառով բերքի արդյունքը նախատեսվածից քիչ է լինում: Մեծ խնդիր է նաև մթերքի սպառումը, քանի որ մոտակա շուկան համայնքից մոտ 18կմ հեռու է: Երբեմն բնակիչները չեն կարողանում վաճառել բերքը փոխադրման միջոցների բացակայության պատճառով: Համայնքում մշակույթի տան, սպորտդպրոցի, ինչպես նաև ժամանցի կենտրոնների բացակայությունը լուրջ խոչընդոտ է հանդիսանում երեխաների, պատանիների և բնակիչների զարգացման գործընթացում: Համայնքը նաև ունի կանոնավոր տրանսպորտի կարիք, օրական 4 անգամյա Երևան-Էջմիածին-Մարգարա երթուղու սպասարկումը չի բավականացնում բնակիչներին, քանի որ նույն երթուղին սպասարկում է փոքր միկրոավտոբուս և օգտվում են մոտ 5 գյուղի բնակիչներին:

**Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈւԹՀՄ) վերլուծություն**

Համայնքի զարգացումն ապահովող միջոցառումների մշակման և իրատեսական արդյունքների հասնելու համար իրականացվել է համայնքի ուժեղ և թույլ կողմերի, արտաքին միջավայրի կողմից ընձեռնված հնարավորությունների և սպառնալիքների գնահատում

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
1. Համայնքում գազի և էլեկտրականության բավարար մատակարարումը: 2. Անհրաժեշտ պարագաներով համալրված նախակրթարանը: 3. Համայնքի աշխարհագրական դիրքը, բնակլիմայական բարվոք պայմանները: 4. Համայնքում գյուղատնտեսական հողերի բավական մեծ քանակի օգտագործում՝ մշակում: 5. Կարկտակայանների առկայությունը:	1. Խմելու ջրի ջրագծերի վերանորոգման անհրաժեշտություն 2. Բնակչության վարկունակության անկում 3. Համայնքի մանկապարտեզի բացակայությունը, դպրոցում անհրաժեշտ սարքավորումների, պարագաների և լաբորատորիաների բացակայությունը: 4. Բուժ ամբուլատորիայի շենքի անհրաժեշտությունը: 5. Համայնքի բնակիչներից հողի հարկի գանձումների դժվարությունները, որի պատճառը սոցիալական վատ վիճակն է: 6. Առկա գործազրկությունը: 7. Մշակույթի տան բացակայությունը: 8. Ժամանցի սահմանափակ հնարավորությունը:

	<p>9. Ներդրումային ծրագրերի և արտասահմանյան ներդրողների բացակայությունը:</p> <p>10.Գյուղատնտեսական մթերքների իրացման խնդիրը:</p>
<b>Հնարավորություններ</b>	<b>Սպառնալիքներ</b>
<ul style="list-style-type: none"> <li>• Հեռանկարային ծրագրեր, որոնք կբերեն ֆինանսական կայունության</li> <li>• Աշխատուժի առկայությունը</li> <li>• Համայնքի ղեկավարն ու ավագանին վայելում են բնակչության վստահությունը</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>• Խմելաջրի ջրագծերի կոռոզիոն ծայրահեղ աստիճանում գտնվելը</li> <li>• Ոռոգման ջրի մատակարարումը</li> <li>• Գարնանային ցրտահարությունը և կարկտահարությունը</li> </ul>

### 3. ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՄԱՀՄԱՆՈՒՄ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ

Վարդանաշեն համայնքի տնտեսական զարգացման գործում կարևոր է հաշվի առնել համայնքի բնակչության հեռանկարային աճը:

Համայնքի զարգացման ռազմավարությունն է՝ բարեփոխումներ անցկացնելու ճանապարհով հետևողականորեն բարելավել համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական, մշակութային և հանգստի պայմանները և մաքուր, բարեկարգ, կանաչապատ և գրավիչ բնակավայրը:

Համայնքի հնգամյա զարգացման ծրագրում նախատեսված աշխատանքների իրականացման արդյունքում համայնքում կլուծվեն անպիսի կարևոր հարցեր, ինչպիսիք են ժամանցի և զբաղվածության կենտրոններ ստեղծելը, որը կխթանի նաև առողջ սերունդներ ունենալուն, բնակիչների ապրելու պայմանների բարելավվում, որը կարվի բացառապես մաքուր և շուրջօրյա ջուր մատակարարելով, հագեցված բուժկենտրոն ստեղծելով:

Ոռոգման համակարգի վերակառուցումը և լավ ջրամատակարարումը կնպաստի բնակիչների իրական եկամուտների 20% աճին, որը իր հերթին կբերի հարկերի հավաքագրման արդյունքների բարելավման:

Համայնքը ունի բոլոր բավարար ցուցանիշները գործարարների և գյուղմթերքի մշակման այլ արտադրամասերի կառուցման համար: Համայնքում մշակվում է գրեթե բոլոր տեսակի բանջարեղեն և միրգ: Կատարելով տարբեր տեսակի դիտարկումներ պարզվել է, որ կարտոֆիլի, ձմերուկի, սմբուկի, պղպեղի և լոլիկի բավական մեծ պաշարներ ունենալով համայնքը մարզում առաջատարներից է:

Համայնքի զարգացման գործում կարևոր և անփոխարինելի դեր է կատարում նաև ՏԻՄ-ի աշխատանքը, որն իր հերթին կախված է համայնքապետարանի շենքային և գույքային պայմաններից:

Զարգացման հիմնական ուղղությունների իրականացման գործընթացում խիստ կարևոր է տեղական իշխանությունների, համայնքի բնակչության, լրատվամիջոցների և գործարարների համատեղ գործունեությունը, ինչպես նաև համագործակցությունը պետական կառավարման մարմինների և դոնոր կազմակերպությունների հետ:

## ***Համայնքի զարգացման հեռահար նպատակի (տեսլականի) սահմանում***

Վարդանաշեն համայնքի տեսլականը՝  
Համայնքը դարձնել զարգացած, ապահով և բարեկեցիկ: Տեղական ինքնակարավարման մարմինների աշխատանքը կուղղվի միայն ու միայն երիտասարդության, մշակույթի, կրթության զարգացմանը: Համայնքը պետք է ունենա անհրաժեշտ բոլոր գրավիչ պայմանները բիզնեսի և ներդրումների համար:

## ***Համայնքի զարգացման նպատակների սահմանում***

Առաջիկա 5 տարիներին համայնքի հիմնական նպատակներն են՝

Համայնքի գյուղատնտեսության զարգացմանը նպաստող միջոցառումներ.

1. Ոռոգման համակարգերի զարգացում
2. Դաշտամիջյան ճանապարհների բարելավում
3. Գյուղմթերքի վերամշակման արտադրամասի ստեղծում
4. Գյուղատնտեսության վարկավորման համակարգի բարելավում
5. Ապահովագրական համակարգի առկայություն

Ոչ-գյուղատնտեսական գործունեության զարգացմանը նպաստող միջոցառումներ

1. Փոքր և միջին բիզնեսի հիմնման դասընթացների կազմակերպում
2. Շուկայի ուսումնասիրում
3. Համայնքում վերամշակման արտադրության հիմնում
4. Բիզնեսի զարգացմանը խթանող պայմանների ստեղծում

Համայնքի բնակչության կյանքի, առողջապահական և կրթական ծառայությունների որակի բարձրացմանը նպաստող միջոցառումներ

1. Խմելաջրի ջրագծերի վերանորոգում
2. Մշակույթի տան վերանորոգում
3. Բուժամբույլատորիայի կառուցում և համալրում անհրաժեշտ սարքավորումներով
4. Դպրոցը կահույքով և լաբորատորիայի անհրաժեշտ սարքավորումներով վերազինում
5. Մանկապարտեզի կառուցում
6. Մշակութային կյանքի զարգացում
7. Մարզադահլիճի կառուցում

ՏԻՄ-երի կառավարման արդյունավետությանը ուղղված միջոցառումներ

1. Համայնքապետարանի շենքային պայմանների բարելավում
2. Համայնքապետարանի կահավորում
3. Անդամակցություն հասարակական կազմակերպությունների
4. Աշխատակազմի և ավագանու համապատասխան ուսուցում, դասընթացների կազմակերպում

## ***ՀՀԶԾ իրականացում, իրազեկում, գնահատում, կազմում***

ՀՀԶԾ իրականացումը կատարվելու համայնքի ղեկավարի հսկողությամբ և պատասխանատվությամբ: Աշխատանքներին մասնակցելու են համայնքապետարանի աշխատակազմը, ավագանին և ղեկավարին կից խորհրդակցական մարմնի ներկայացուցիչները: ՀՀԶԾ իրազեկումը կատարվելու է համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմնի, համայնքի ավագանու, աշխատակազմի, համայնքի ընդհանուր ժողովների միջոցով: Այն կտեղադրվի նաև Վարդանաշեն համայնքի պաշտոնական կայք էջում:

ՀՀԶԾ գնահատումը կատարվում է ծրագրերի մոնիթորինգի արդյունքում: Այն գնահատվում է վերլուծությունների հիման վրա, որի արդյունքում բացահայտվում եղած թերությունները, ի հայտ եկած չկանխատեսված խնդիրները, դրանց պատճառները: Առաջարկվում և քննարկվում են դրանք շտկելու միջոցառումները:

ՀՀԶԾ-ում ներառվել է ապագա հինգ տարիների ընթացքում համայնքի զարգացման ծրագրերը, կատարվելիք աշխատանքները, ֆինանսական ներդրումներն ու դրա հայթհայթման աղբյուրները, սեփական եկամուտների ավելացումը, միջոցառումների իրականացման համար բյուջեի ճիշտ բաշխումը: Ծրագրերի իրականացումը կատարվելու է համայնքի ամբողջ բնակչության անմիջական մասնակցությամբ:

**Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր Ո Ւ**  
**Խմելու ջրի ներքին ցանցի կառուցում**  
 (Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Ազգաբնակչության կենցաղային պայմանների բարելավում, կյանքի որակի բարձրացում						
Ծրագրի անմիջական նպատակ՝ Ունենալ շուրջօրյա խմելու ջրի մատակարարում	Ցուցանիշներ	Ելակետային և արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		-	5.060.000	5.060.000	5.060.000	5.060.000	5.060.000
Ծրագրի միջանկյալ արդյունքներ 1. Փաստաթղթերի կազմում  2. Խմելու ջրի ցանցի վերակառուցում	1.	Ելակետային և արժեք	Թիրախային արժեքներ				
	Ցուցանիշներ	2016	2017	2018	2019	2020	2021
		-	300.000	300.000	300.000	300.000	300.000
	2.	Ելակետային և արժեք	Թիրախային արժեքներ				
	Ցուցանիշներ	2016	2017	2018	2019	2020	2021
		-	20000.0	11000.0	11000.0	11000.0	7000.0
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1. Նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմում  2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 2.1. Իրականացնել աշխատանքները 2.2. Կազմել, քննարկել և ընդունել աշխատանքների կատարման ավարտական ակտը						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ Կապիտալ ծախսեր՝ Ընդհանուր բյուջեն՝ 60.000.000դրամ						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Աշխատույժ, նյութեր, տեխնիկա						
Ծրագրի հիմնական ռիսկերը							
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի բնակիչները						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2017-2021թթ.						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Համայնքի խմելու ջրի ցանցի լիարժեք կառուցում, շուրջօրյա ջրամատակարարում						

**Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր Ո Չ**  
**Մանկապարտեզի մասնաշենքի կառուցում**

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Համայնքի և հարակից համայնքների երեխաների զարգացվածությունը և զբաղվածությունը ապահովելու համար						
Ծրագրի անմիջական նպատակ՝ Ունենալ գործող մանկապարտեզ	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		-	12500.0	12500.0	12500.0	12500.0	12500.0
Ծրագրի միջանկյալ արդյունքներ 1. Փաստաթղթերի կազմում	1.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
	-	350.000	350.000	350.000	350.000	350.000	
2. Մանկապարտեզի կառուցում	2.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
	-	10000.0	5000.0	5000.0	2500.0	2500.0	
Ծրագրի հիմնական գործողությունները	<p>1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ</p> <p>1.1. Նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմում</p> <p>1.2. Կնքել պայմանագիր հաղթող շին. կազմակերպության հետ, իրականացնել աշխատանքները</p> <p>2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ</p> <p>2.1. Իրականացնել աշխատանքները</p> <p>2.2. Կազմել, քննարկել և ընդունել աշխատանքների կատարման ավարտական ակտը</p>						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ Կապիտալ ծախսեր՝ Ընդհանուր բյուջեն՝ 25.000.000 դրամ						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Հովանավորներ և պետության կողմից ֆինանսական աջակցություն						
Ծրագրի հիմնական ռիսկերը							
Ծրագրի հիմնական շահառուները	Մանկապարտեզ հաճախող երեխաները, համայնքի բնակչությունը						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2017-2021թթ.						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Մանկապարտեզի կառուցում, կահույքով և անհրաժեշտ պարագաներով համալրում: Համայնքում գործում է նախակրթարան, որը չի բավարարում բնակիչներին:						



**Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր Ո Յ**  
**Մշակույթի տան (ակումբի շենք) վերանորոգում**  
(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Կնպաստի համայնքի բնակչության զարգացմանը						
Ծրագրի անմիջական նպատակ՝ Ունենալ գործող ակումբի շենք	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		-	3840.0	3840.0	3840.0	3840.0	3840.0
Ծրագրի միջանկյալ արդյունքներ 1. Փաստաթղթերի կազմում	1. Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		-	300.000	300.000	300.000	300.000	300.000
2. Մշակույթի տան վերանորոգում	2. Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
			18000.0	10000.0	10000.0	7000.0	5000.0
Ծրագրի հիմնական գործողությունները	<p>1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ</p> <p>1.1. Նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմում</p> <p>1.2. Կնքել պայմանագիր հաղթող շին. կազմակերպության հետ, իրականացնել աշխատանքները</p> <p>2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ</p> <p>2.1. Իրականացնել աշխատանքները</p> <p>2.2. Կազմել, քննարկել և ընդունել աշխատանքների կատարման ավարտական ակտը</p>						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ Կապիտալ ծախսեր՝ Ընդհանուր բյուջեն՝ 50.000.000 դրամ						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Հովանավորներ և պետության կողմից ֆինանսական աջակցություն						
Ծրագրի հիմնական ռիսկերը							
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի բնակչությունը						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2017-2021թթ.						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Համայնքը արդեն մի քանի տարի է ինչ չի օգտագործում մշակույթի տունը: Դրա վերանորոգումը կնպաստի բնակչության զբաղվածության որակի բարձրացմանը, և ժամանցի կենտրոն ստեղծելուն:						

**Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր Ո 4**  
**Բուժամբուլատորիայի մասնաշենքի կառուցում**  
 (Օրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Համայնքի և հարակից համայնքների բնակչության առողջության պահպանման բարելավում						
Ծրագրի անմիջական նպատակ՝ Ունենալ բարեկարգ և ժամանակակից սարքավորումներով զինված բուժամբուլատորիա	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		-	6960.0	6960.0	6960.0	6960.0	6960.0
Ծրագրի միջանկյալ արդյունքներ 1. Փաստաթղթերի կազմում	1.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		300.000	300.000	300.000	300.000	300.000	
2. Մասնաշենքի կառուցում	2.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		12000.0	5000.0	3000.0	3000.0	2000.0	
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1. Նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմում 1.2. Շինարարական կազմակերպության ընտրության մրցույթը 1.3. Կնքել պայմանագիր հաղթող շին. կազմակերպության հետ իրականացնել աշխատանքները  2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 2.1. Իրականացնել աշխատանքները 2.2. Կազմել, քննարկել և ընդունել աշխատանքների կատարման ավարտական ակտը						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ Կապիտալ ծախսեր՝ Ընդհանուր բյուջեն՝ 25.000.000դրամ						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Հովանավորներ և ՀՀ կառավարության կողմից ֆինանսական աջակցություն						
Ծրագրի հիմնական ռիսկերը							
Ծրագրի հիմնական շահառուները	Վարդանաշեն համայնքի և հարակից համայնքների բնակիչները						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2017-2021թթ.						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Ունենալ բարեկարգ բուժամբուլատորիա						

**Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր Ո 5**

**Համայնքի ոռոգման ջրագծի նոր խողովակաշարի անցկացում**

(Օրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Ոռոգման ջրի ջրամատակարարման հեշտացում						
Ծրագրի անմիջական նպատակ՝	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		-	-	-	-	-	-
Ծրագրի միջանկյալ արդյունքներ 1. Փաստաթղթերի կազմում	1. Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		-	200.000	0	0	0	0
2. Նոր խողովակաշարի կառուցում	2. Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		-	15000.0	7000.0	7000.0	3000.0	3000.0
Ծրագրի հիմնական գործողությունները	<p>1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ</p> <p>1.1. Նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմում</p> <p>2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ</p> <p>2.1. Իրականացնել աշխատանքները</p> <p>2.2. Կազմել, քննարկել և ընդունել աշխատանքների կատարման ավարտական ակտը</p>						
Ծրագրի բյուջեն	<p>Ընթացիկ ծախսեր՝</p> <p>Կապիտալ ծախսեր՝</p> <p>Ընդհանուր բյուջեն՝ 36.000.000դրամ</p>						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	ՀՀ կառավարության կողմից ֆինանսական աջակցություն						
Ծրագրի հիմնական ռիսկերը							
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի բնակիչները						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2017-2021թթ.						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Ոռոգման ջրի համակարգում կիսախողովակաշարի կառուցման միջոցով ջրամատակարարումը ավելի հեշտ կլինի, ինչպես նաև հասանելի այն հողատարածքներին, որոնք չեն մշակվում կամ մասնակի են մշակվում ջրի պատճառով						

## ***ՀՀԶԾ ֆինանսավորում***

Քանի որ համայնքը չունի բավականաչափ սեփական եկամուտներ և ՀՀԶԾ-ի իրականացումը չի կարող անել միայն սեփական ֆինանսավորմամբ, ուստի ֆինանսավորուման հիմնական աղբյուրներ կարող են հանդիսանալ ՀՀ Կառավարությունը, Հասարակական կազմակերպություններ, անհատ ներդրողներ, միջազգային բարեգործական կազմակերպություններ, բարերարներ և այլոք:

## ***ՀՀԶԾ մոնիթորինգը***

ՀՀԶԾ-ի իրականացման ամբողջ ժամանակաշրջանում վերահսկողություն կսահմանվի ինչպես համայնքի աշխատանքային խմբի,

համայնքապետարանի, այնպես էլ միջազգային, բարեգործական, ու

հասարակական կազմակերպությունների կողմից:

ՀՀԶԾ-ի ներքին մոնիթորինգն իրականացվելու է ՀՀԶԾ-ի և տարեկան բյուջեի կառավարման գծով ԽՄ-ի կողմից յուրաքանչյուր տարին մեկ անգամ:

Այն իրականացվելու է ըստ ոլորտային ծրագրերի ու միջոցառումների աշխատանքների կատարման ցուցանիշների: